Հաստատվեց
01.09.2022թ.

Հանրակրթական ուսումնական հաստատության հայոց լեզվի և գրականության մեթոդական միավորման ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլան

Սեպտեմբեր՝

1. 2022-2023 Ուսումնական տարվա ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորման թննարկում, ստուգում և հաստատում:

2. 5-րդ և 10-րդ դդ.-ում անցկացնել նախնական (մնացորդային) գիտելիքների ստուգում (ներքին գնահատում):

Հոկտեմբեր՝

1. Կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորուղների անհատական ուսուցման պլանների մշակում:

2. Թարգմանչած տոնը և մեր << Առաջին ուսուցիչը>> թեմաներով առանձին դասերի անցկացում՝ որպես մեկ ստեղծագործական ժամ :

Նոյեմբեր՝

1.Միավորային գնահատում իրականացնելու հիմնական տեսակները՝

ա) բանավոր հարցում

բ) գործնական աշխատանք

գ) թեմատիկ աշխատանք

դ) ամփոփիչ աշխատանք (բացառիկ դեպքերում)

Առաջին կիսամյակաում այդ աշխատանքների քանակի վերաբերյալ քննարկում և վերջնական որոշում:

2. Մայրենիի դրվածքը միջին և բարձր դասարաններում:

Դեկտեմբեր՝

1.Առարկայական օլիմպիադաների անցկացում:

2. Միջին դասարաններում գրականության կիսամյակային գնահատումը ցանկալի է իրականացնել բանավոր հարցման միջոցով՝ որպես 9-րդ դասարանի գրականության բանավոր քննաության նախնական պատրաստվածություն :

3. Ամփոփել օլիմպիադայի արդյունքները և համապատասխան որոշումներ կայացնել այն բարելավելու նպատակով:

4. Անցկացնել միասնական, կենտրոնացված քննությունները հայոց լեզվից և գրականությունից:

Հունվար՝

1. 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ծրագրային նյութերի և ուսումնական պլանների քննարկում, ստուգում և հաստատում :

2. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչ ժամերի տնօրինման առաջարկությունների քննարկում ռուսական դասարաններում՝ մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասաժամերի վերաբերյալ (սովորողների կողմից բավարար յուրացնելու նպատակով, քանի որ ուսուցանվող թեմաները բավականին բարդություն են առաջացնում նվազ ժամաքանակի պայմաններում) :

3. Նախորդ կիսամյակի աշխատանքային գործունեության ամփոփում :

Փետրվար՝

1. Ուսուցիչների համար մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվությունների կազմակերպում:

2. Դասավանդման հմտությունների բարձրացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և իրականացում, փոխադարձ դասալսումներ:

3. Մայրենիի միջազգային օրվան նվիրված դաս-միջոցառումների անցկացում:

Մարտ՝

1. Կրթության որակի բարձրացման նպատակով նորագույն տեխնոլոգիաների մեթոդների կիրառումը հայոց լեզվի և գրականության դասաժամերին :

2. Դպրոց- ծնող համագործակցության ընդլայնմանն ուղղված մեջոցառումների կազմակերպում:

3 . Քննարկել աշակերտների հանձնարարվող տնային առաջադրանքների հարցը:

Ապրիլ՝

1. Սովորողների գիտելիքների հմտությունների դիրքորոշմանը և արժեքային մոտեցումների ձևավորման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովում:

2. <<Գարունն ու մայրությունը գրականության մեջ >> թեմայով անցկացնել դաս-միջոցառումներ կամ մեկ ստեղծագործության ժամ :

Մայիս՝

1. Թեմատիկ գրավոր աշխատանքների անցկացում, քննարկում և վերլուծություն :
2. Փորձնական քննության անցկացում 9-րդ դասարաններում հայոց լեզվից:
3. 120-ից 200 և ավելի ժամ բացակայություն ունեցող սովորողների քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:

Հունիս՝

1. Սովորողների համ կազմակերպված ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացում, արդյունքների վերլուծություն և ամփոփում :
2. Ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերլուծություն և ամփոփում:

Մ/Մ –ի նախագահ՝ Ա.Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ Ս. Հ. Տամրազովա